

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն.....	3
1.2. Շինարարություն.....	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր.....	6
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի Եկամուտներ.....	10
5.2. Բյուջեի ծախսեր	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը.....	12
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	13
6.1. Գնաճ	13
6.2. Ավանդներ և վարկեր	14
7. ԱՄՓՈՓՈՒՄ	16

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, 2018-2019թթ., %



2019թ. հունվար-դեկտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 7.8%՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճելով մոտ 2.2 տոկոսային կետով: Ինչպես և սպասվում էր, բազային էֆեկտի հաշվին տարեվերջին ՏԱՑ-ն ունեցել է արագացման միտում: Ըստ տնտեսության ոլորտների՝ ՏԱՑ-ի արագացումը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության աճի արագացմամբ և գյուղատնտեսության ավելի փոքր անկմամբ:

Ամսական աճը, այսինքն՝ դեկտեմբեր ամսվա աճը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, կազմել է 10.7%, որը 4.3 տոկոսային կետով ավելի բարձր է, քան նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Տնտեսության ակտիվության այս պատկերը, առաջին հայացքից, թվում է «տնտեսական հեղափոխության» հաջողված սկիզբ, սակայն մի փոքր ավելի խորությամբ ուսումնասիրելու դեպքում, պարզ է դառնում, որ ամեն ինչ այնքան էլ «աննախադեպ լավ» չէ: Հիմնական խնդիրը կայանում է տնտեսական աճի կառուցվածքում, որը պարունակում է մի շարք խնդրահարույց զարգացումներ, որոնք հարցականի տակ են դնում բարձր աճի շարունակությունն ապագա ժամանակահատվածներում:

Այսպես.


Տնտեսական ակտիվությանն ամենամեծ նպաստում ունեցող ճյուղը մնում է ծառայությունների ոլորտը (6.8 տոկոսային կետով)՝ իր մտահոգիչ կառուցվածքով, որին կանդրադառնանք ստորև:

Տարեսկզբից տնտեսությունում միակ դրական գործոնն այն էր, որ արդյունաբերությունն աճում էր մշակող արդյունաբերության հաշվին, սակայն 2019թ. ամռանից պատկերը փոխվեց, երբ սկսեց շահագործվել Թեղուտի հանքը: Այսպիսով՝ տնտեսական ակտիվության աճին ամբողջ արդյունաբերությունը նպաստել է 1.8 տոկոսային կետով, որից գրեթե կեսը տեղի է ունեցել հանքարդյունաբերության աճի հաշվին:

Առևտրի և շինարարության նպաստումները ՏԱՅ-ին կազմել են համապատասխանաբար 1.1 և 0.3 տոկոսային կետ:

Գյուղատնտեսության ոլորտի խնդիրները այդպես էլ չլուծվեցին 2019-ին, ինչի արդյունքում տարեկան տվյալներով այս ոլորտում նորից գրանցվեց անկում՝ 4.2 տոկոսով՝ տնտեսական ակտիվության աճին ունենալով բացասական նպաստում՝ 0.6 տոկոսային կետի չափով: Սա սպասելի էր, քանի որ բազմաթիվ խնդիրների առկայության պարագայում կառավարությունը որոշում կայացրեց փակել գյուղատնտեսության նախարարությունը, ինչը, ինչպես երևում է, չի նպաստել ճյուղի զարգացմանը:


Գծապատկեր 2. Տնտեսության ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները¹, 2019թ., տոկոսային կետ



¹ Գյուղատնտեսության ցուցանիշը հրապարակվում է եռամսյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակլիմայական ոչ կայուն պայմաններից կախված ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:

1.1. Արդյունաբերություն


Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Արդյունաբերության ոլորտի աճի արագացումը սկսած 2019-ի կեսերից պայմանավորված է հանքարդյունաբերության վերականգնմամբ: Այսպես՝ 2019 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին արդյունաբերության աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 9.0 տոկոս, որի 4.1 տոկոսային կետը ապահովվել է մետաղական հանքարդյունաբերության 25% աճի շնորհիվ: Այս բարձր աճը հիմնականում պայմանավորված է Թեղուտի հանքի վերագործարկմամբ: Իսկ մշակող արդյունաբերության աճը կազմել է ընդամենը 8.2 տոկոս: Ստացվում է, որ կառավարությանը այդպես էլ չհաջողվեց ապահովել բարձր տնտեսական աճ առանց հանքարդյունաբերության մասնակցության:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Շինարարության ծավալի աճի տեմպը կայունացել է ցածր մակարդակում:
Հունվար-դեկտեմբեր ամիսների աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 4.6%: Հատկանշական է, որ վերջին յոթ ամիսներին շինարարության կուտակային աճը եղել է այս նույն մակարդակում:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Ինչպես 2018-ին, այնպես էլ 2019-ին տնտեսական աճին ամենամեծ նպաստող ճյուղը եղել է ծառայությունների ոլորտը, որն ունի անկայուն կառուցվածք: 2019թ. տարեկան տվյալներով 2018-ի նկատմամբ այս ճյուղն աճել է 15.0 տոկոսով, որը 3.8 տոկոսային կետով ավելի ցածր է, քան նախորդ տարվա ցուցանիշը (18.8%):


Խնդիրն այն է, որ ծառայությունների աճը հիմնված է ոչ կայուն և արդյունք չստեղծող գործունեությունների վրա: Այսպես՝ ծառայությունների աճին ամենամեծ նպաստում ունեցողը մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտն է, որը հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով ծառայությունների աճին նպաստել է 4.8 տոկոսային կետով: Սա հիմնականում շահումով խաղերի և խաղատների գործունեությունն է, որը, ինչպես բազմիցս նշել ենք, չի նպաստում հարկային եկամուտների աճին, հավելյալ արդյունք չի ստեղծում և բավական անկայուն է:

Ծառայությունների կառուցվածքի հաջորդ խնդրահարույց կետերը «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», ինչպես նաև «կացության և հանրային սննդի կազմակերպում» ենթաճյուղերն են: 2019-ին այս գործունեության տեսակների դերի բարձրացումը պայմանավորված է ավտոմեքենաների ներմուծման կտրուկ աճի հետ:

Այսպես՝ մարդիկ մեծ ծավալներով վարկեր են վերցրել, որպեսզի ավտոմեքենաներ ներմուծեն, մաքսազերծեն և վերանորոգեն: Բացի այդ,

ներմուծված բոլոր ավտոմեքենաները ապահովագրվել են: Այս գործարքների հաշվին աճել է ֆինանսական և ապահովագրական գործունեությունը (ավելի մանրամասն տե՛ս «Ավանդներ և վարկեր հատվածում»): Այնուհետև, ԵԱՏՄ անդամ պետություններից ժամանած գնորդները օգտվել են «կացության և հանրային սննդի կազմակերպում» ոլորտի ծառայություններից, ինչը ևս զգալի աճ է ցուցաբերել՝ մոտ 27.2%՝ ընդհանուր ծառայությունների աճին նպաստելով 2.3 տոկոսային կետով: Վերջինս հաճախ սխալմամբ նշվում է որպես զբոսաշրջության աճը բնութագրող ցուցանիշ: Սակայն մեքենաների գնորդներ այլևս չեն այցելի Հայաստան, հետևաբար վերոհիշյալ աճերը 2020 թվականին նույնպես տեղի չեն ունենա:


Գծապատկեր 6. Ծառայությունների կառուցվածքը և նպաստումները, 2019թ. հունվար-նոյեմբեր, %²



² 2019թ. հունվար-դեկտեմբեր ամիսների համապատասխան ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 7. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, 2018-2019թթ., %



Առևտրի ծավալների աճի տեմպը կայունացել է: Հունվար-դեկտեմբեր ամիսներին առևտրի ոլորտի կուտակային աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 8.9 տոկոս և գրեթե հավասարվել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշին:

2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 8. Արտահանման կուտակային աճ, 2018-2019թթ., %



Արտահանման աճը շարունակել է վերականգնվել և արագանալ մինչև տարեվերջ: Ինչպես և ՏԱՅ-ը, արտահանման աճի արագացումը առավելապես կապված է նախորդ տարվա արտահանման ծավալների աճի դանդաղման (ցածր բազայի) հետ: Հունվար-դեկտեմբերին արտահանումն աճել է 9.4 տոկոսով, ինչը 1.6 տոկոսային կետով ավելի բարձր է քան նախորդ տարվա ցուցանիշը:

Արտահանման աճը հիմնականում պայմանավորված է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «պատրաստի սննդի արտադրանք» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի արտահանման աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 4.6, 3.9 և 3.3 տոկոսային կետ: Մինչդեռ «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալները նվազել են՝ բացասական նպաստելով արտահանման աճին (համապատասխանաբար -1.7 և -2.6)³: Արտահանման աճի վերականգնումը նույնպես պայմանավորված է Թեղուտի հանքի շահագործմամբ, այլապես կշարունակվեին տարեսկզբի բացասական միտումները:

Գծապատկեր 9. Ներմուծման կուտակային աճ, 2018-2019թթ., %



Ներմուծման աճը նույնպես վերականգնվում է: Հունվար-դեկտեմբեր ամիսներին այն աճել է 10.8%-ով, որը, սակայն, շարունակում է բավական ցածր մնալ (մոտ 10.6 տոկոսային կետով) նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից:

Ներմուծման ծավալների աճը առավելապես պայմանավորված է տրանսպորտային միջոցների ներմուծման աճով: Եթե հունվար-հոկտեմբեր ամիսներին այդ աճը կազմում էր 68.6%, ապա հունվար-նոյեմբերին այն կազմել է 83.8 տոկոս՝ ապահովելով 11 ամիսներին ներմուծման 6.8 տոկոս աճի 6.2

³ Արտահանման կառուցվածքի վերլուծությունն իրականացվել է 2019թ. հունվար-նոյեմբեր ամիսների տվյալների հիման վրա, քանի որ հունվար-դեկտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

տոկոսային կետը: Դեկտեմբերին ավտոմեքենաների ներմուծումը շարունակել է աճել:

Մնացած ապրանքախմբերից առավել նշանակալի է «քիմիական արտադրանք» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի աճերը, որոնք ընդհանուր ներմուծման աճին նպաստել են համապատասխանաբար 1.6 և 1.4 տոկոսային կետով:

Միաժամանակ, «սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի ներմուծման ծավալները շարունակել են նվազել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կրճատվելով 12.4 տոկոսով և ընդհանուր ներմուծման ծավալի աճին ունենալով բացասական նպաստում՝ 2.3 տոկոսային կետով:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2019թ. հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.8 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 8.4 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 3.8 տոկոսով: Նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները կազմել են 4.0, 2.9 և 3.7 տոկոս: Միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 182,750 դրամ, ընդ որում՝ պետական հատվածում՝ 161,789 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 193,288 դրամ:



Հարկ է նշել, որ պետական հատվածում աշխատավարձերի գծով օրենսդրական փոփոխություններ 2019-ին չեն եղել, հետևաբար **պետական հատվածի աշխատավարձերի աճը պայմանավորված է պարզևատրումների աճով:** Ինչ վերաբերում է մասնավոր հատվածին, ապա այն նախորդ տարվա աճից բարձր է ընդամենը 0.1 տոկոսային կետով, այն դեպքում, երբ տնտեսական ակտիվությունն աճել է 2.2 տոկոսային կետով:


Գծապատկեր 10. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2018-2019թթ., հունվար-դեկտեմբեր, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

**Գծապատկեր 11. Անվանական փոխարժեքի միտումները 2018-2019թթ., կուտակային աճ, %
(աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)**





2019 թվականի հունվար-դեկտեմբերին ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 0.5 տոկոսով՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ: Նույն ժամանակահատվածում եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը արժևորվել է 6.1 տոկոսով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 4.0 տոկոսով:

Դրամի արժևորումը նույնպես կապվում է մեքենաների ներմուծման աճի հետ, քանի որ դրանց զգալի մասը վաճառվել է ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիներին՝ հանգեցնելով արտարժույթի ներհոսքի աճի: Ավելի մեծ չափով արժևորում թույլ չտալու համար ԿԲ-ն տարվա ընթացքում բաց շուկայական գործառնությունների միջոցով գնել է ավելի քան 500 մլն դոլար արտարժույթ:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտներ

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը շարունակել է դանդաղել նաև դեկտեմբեր ամսին: 2019 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին ընդհանուր եկամուտներն աճել են 16.2 տոկոսով՝ կազմելով 1,559.1 մլրդ դրամ, որից հարկերը և տուրքերը աճել են 16.4 տոկոսով՝ կազմելով 1,464.3 մլրդ դրամ: Հարկային եկամուտների բարձր աճը մեծամասամբ պայմանավորված է ավտոմեքենաների ներմուծման ծավալների՝ նախորդ տարվա համեմատ կտրուկ աճով, ինչպես նաև սպասվածից ավելի բարձր տնտեսական աճով:


Հարկ է նշել, որ **հարկային եկամուտների տարեկան ճշտված պլանը 2019-ի համար կազմում է 1,465.1 մլրդ դրամ⁴, որի համեմատ հարկային եկամուտները թերակատարվել են:** Սակայն, պետք է նաև նկատի ունենալ, որ ՊԵԿ-ը 2019թ. վերջում իրականացրել է մոտ 42.8 մլրդ դրամի ԱԱՀ դեբետային գումարների վերադարձ, որն արվել է արդեն հավաքագրված եկամուտներից:

⁴ 2019-ի ճշտված պլանը ներկայացված է 2019թ. առաջին ինն ամիսների պետական բյուջեի կատարման հաշվետվությամբ:

Այսինքն՝ փաստացի տնտեսությունից հավաքագրվել են մոտ 1,507.1 մլրդ դրամ հարկային եկամուտներ, որոնցից 95 մլրդ դրամը մեքենաների ներմուծման մաքսավճարներն են:

5.2. Բյուջեի ծախսեր

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերի աճը և դրա բաղադրիչների նպաստումները, %




Պետական բյուջեի ինչպես եկամուտների, այնպես էլ ծախսերի աճը ամենևին չի կարելի համարել «հեղափոխական» աճ: Բնակչության տեսանկյունից ավելի կարևոր է պետական բյուջեի ծախսերի աճը, քան եկամուտներինը: Քանի որ հենց ծախսերի միջոցով է պետությունը լուծում սոցիալական և տնտեսական մի շարք խնդիրներ: Սակայն, պետական ծախսերի աճը փոքր է սպասվածից: 2019 թվականին պետական բյուջեի ծախսերը կազմել են 1623.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով ընդամենը 12.2%-ով՝ պայմանավորված ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճով: Ընթացիկ ծախսերն աճել են 10.6 տոկոսով՝ պայմանավորված հիմնականում ապրանքների և ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև սոցիալական նպաստների և կենսաթոշակների աճերով: Կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) նույն ժամանակահատվածում աճել են 26.0 տոկոսով՝ կազմելով 186.6 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի աճը պայմանավորված է միայն ցածր բազայով, այսինքն՝ 2018թ. նույն ժամանակահատվածում կապիտալ ծախսերը զգալիորեն թերակատարվում էին: Կապիտալ ծախսերի համար տարվա ճշտված պլանը կազմում է 248.8 մլրդ դրամ, այսինքն՝ դրանք թերակատարվել են մոտ 25.0 տոկոսով:

Ստացվում է, որ տնտեսությունից հավաքագրված դրամական միջոցները այդպես էլ չեն վերադարձվել ծախսերի տեսքով, ինչը իր բացասական ազդեցությունը կունենա հաջորդ տարիներին:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը


Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



2019թ. պետական բյուջեն կատարվեց պակասուրդով: 2019-ի ամբողջ ընթացքում պետական բյուջեն ուներ խոշոր հավելուրդ: Սակայն, դեկտեմբեր ամսին կատարված մոտ 265.4 մլրդ դրամ ծախսերի արդյունքում ձևավորվել է պետական բյուջեի պակասուրդ՝ 63.9 մլրդ դրամի չափով՝ 2019թ. ճշտված պլանով նախատեսվող 153.1 մլրդ դրամի փոխարեն:

5.4. Պետական պարտք

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



Քննադատելով նախորդ կառավարություններին պարտք ներգրավելու համար՝ նոր կառավարությունը շարունակում է ավանդույթները, սակայն ոչ պրոֆեսիոնալ ձևով: Բանն այն է, որ կապիտալ ծախսերն իրականացվել են զգալի թերակատարմամբ, այսինքն՝ առկա են ազատ գումարներ, որոնք սակայն չեն օգտագործվել, փոխարենը ներգրավվել է բավական մեծ չափով նոր պարտք:


2019թ. դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 6,834.9 մլն դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճելով 7.3 տոկոսով: Նախորդ ամսվա (նոյեմբերի վերջի) նկատմամբ կառավարության պարտքն աճել է 180.9 մլն դոլարով (2.7%-ով)՝ հիմնականում պայմանավորված բյուջետային աջակցության վարկերի ներգրավմամբ: Ընդ որում, ներքին պարտքը նվազել է 5.4 մլն դոլարով, իսկ արտաքին պարտքն աճել է 186.3 մլն դոլարով:

2018թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ կառավարության ընդհանուր պարտքն աճել է 462.4 մլն դոլարով (7.3%-ով), ներքին պարտքն աճել է 148.3 մլն դոլարով (10.7%-ով), իսկ արտաքին պարտքն աճել է 314.1 մլն դոլարով (10.7%-ով): 2018թ. դեկտեմբերի վերջի նկատմամբ արտաքին պարտքի կշիռը նվազել է մոտ 0.9 տոկոսային կետով՝ կազմելով 77.5%:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %




Գնաճի տեմպը շարունակում է հեռու մնալ ԿԲ-ի թիրախից: Գնաճի նման ցածր տեմպերը ստիպել են ՀՀ կենտրոնական բանկին 2019թ. ընթացքում երկու անգամ նվազեցնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ հասցնելով այն 5.5%: Սակայն, ԿԲ-ի խթանող քաղաքականությունը բավարար չի եղել գնաճը թիրախին

մոտեցնելու համար: 2019թ. դեկտեմբերին 12-ամսյա գնաճը կազմել է 0.7 տոկոս, որը ավելի ցածր է, քան նոյեմբեր ամսվա գնաճը: Ըստ ԿԲ-ի հիմնավորման՝ ցածր գնաճը պայմանավորված է հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությամբ և արտաքին աշխարհում ցածր գնաճային միջավայրով: Սակայն, հարկ է նշել, որ ԿԲ-ն այս հիմնավորումը բերում էր ամբողջ տարվա ընթացքում, հետևաբար, իմանալով հարկաբյուջետային քաղաքականության ուղղության և արտաքին աշխարհի զարգացումների մասին, պետք է իրականացնել դրամավարկային քաղաքականությանն անհրաժեշտ միջոցառումներ՝ գնաճն իր թիրախին հասցնելու համար:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը 2018-2019թթ., %



2019թ. դեկտեմբերին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը 2018թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 20.7 տոկոս: Ավանդների ծավալների աճի տեմպը գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը մոտ 8.0 տոկոսային կետով:


Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը՝ ըստ տնտեսության հատվածների (նպաստումները), 2019թ., %



2019թ. դեկտեմբեր ամսին կտրուկ աճել են ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ՝ 47.5%-ով: Ընդհանուր ավանդների աճին ոչ ռեզիդենտների ավանդները ունեցել են ամենամեծ նպաստումը՝ 11.4 տոկոսային կետ:

Ավանդների աճին նպաստել են նաև տնային տնտեսություններից ներգրավված ավանդները՝ 6.6 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճին տնտեսության ճյուղերի նպաստումները, 2019թ., %



ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2019թ. դեկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 19.2 տոկոսով, ինչին հիմնականում նպաստել են սպառողական վարկերը՝ 7.3 տոկոսային կետով (աճը՝ 30.6%): Այս վարկերի կառուցվածքում զգալի է «Այլ սպառողական վարկեր» տողը, որը ներառում է մեքենաների ներմուծման համար վերցված վարկերը: Այս տեսակի վարկերը աճել են 50.3 տոկոսով կամ 152.6 մլրդ դրամով: Պատկերն ավելի կբարդանա, եթե հաշվի առնենք ավտոմեքենաների իրացման հետ կապված սպասվող խնդիրները: Եթե ավտոներկրողները չկարողանան փակել այս վարկերը, ապա դա լուրջ խնդիր կստեղծի ֆինանսական համակարգի համար:

Վարկերի աճին նպաստել են նաև հիպոթեքային վարկերը (աճը՝ 40.6%) և ծառայությունների ոլորտին տրամադրված վարկերը (աճը՝ 26.3%)՝ համապատասխանաբար 3.5 և 4.7 տոկոսային կետով: Արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերի ծավալը շարունակել է նվազել 4.9%-ով՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով -0.9 տոկոսային կետով: Վերջինս պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալների կրճատմամբ:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2019 թվականն ամփոփվել է բարձր, սակայն մտահոգիչ կառուցվածք ունեցող տնտեսական ակտիվության ցուցանիշով: Այն ընդամենը 0.1 տոկոսային կետով է առաջ անցել 2017-ին՝ նախորդ կառավարության օրոք գրանցված տնտեսական ակտիվության ցուցանիշից: Արդյունքում, փաստորեն, նոր կառավարության խոստացած «թռիչքային աճն» այդպես էլ չապահովվեց: Կարևոր է արձանագրված տնտեսական աճի կառուցվածքը: 2019թ. տնտեսական աճի ապահովման գործում մեծ տեղ են զբաղեցնում անկայուն ծառայությունների աճն ու ավտոմեքենաների ներմուծման կտրուկ ավելացած ծավալները, որոնք հաջորդ տարի չեն լինելու:

2. Պետական բյուջեի կատարումը այդպես էլ չհամապատասխանեցվեց տնտեսական իրավիճակին: Թեև պետական բյուջեն կատարվել է պակասուրդով, այն բավական հեռու է ծրագրված ցուցանիշից (153.1 մլրդ դրամ): Ի դեպ, 2019թ. ամբողջ ընթացքում, պետական բյուջեն ուներ խոշոր հավելուրդ: Սակայն, տարվա վերջին մեկ ամսվա ընթացքում կասկածելի արագ տեմպերով ձևավորվեց բյուջեի 63.9 մլրդ դրամի պակասուրդը՝ դեկտեմբեր ամսին կատարված մոտ 265.4 մլրդ դրամ ծախսերի արդյունքում, այն պարագայում, երբ նոյեմբեր ամիսն ավարտվել էր 40.2 մլրդ դրամ հավելուրդով: Կապիտալ ծախսերի թերակատարման խնդիրները պահպանվեցին մինչև տարեվերջ, և արդյունքում իրականացվեց կապիտալ ծախսերի ընդամենը 75%-ը: Կապիտալ ծախսերի կատարողականի

վերաբերյալ դեռևս ոչ մի ախտորոշում չի կատարվել և կապիտալ ծախսերի պատշաճ իրականացման համար միջոցառումներ չեն ձեռնարկվել: Հետևաբար, ենթադրվում է, որ կապիտալ ծախսերի թերակատարումը կշարունակվի նաև 2020-ին:

3. 2019-ի խնդրահարույց զարգացումներից է նաև բնակչությանը տրվող վարկերի արագ աճը: Սպառողական վարկերի աճը կազմել է 30.6%: Այս ցուցանիշի կազմում «Այլ սպառողական վարկեր» տողը ներառում է մեքենաների ներմուծման համար վերցված վարկերը: Այս տեսակի վարկերը աճել են 50.3%-ով կամ 152.6 մլրդ դրամով: Հիպոթեքային վարկերն աճել են 40.6%-ով: Սակայն, փաստ է, որ բնակչության եկամուտները նույն չափով չեն աճել, հետևաբար նման իրավիճակը հետագայում կարող է առաջացնել լուրջ ռիսկեր՝ մանավանդ ավտոմեքենաների շուկայի անկման դեպքում:

4. Չափից ավելի ներմուծված ավտոմեքենաները կարող են բեռ դառնալ հասարակության համար: 2019-ին Հայաստան է ներմուծվել աննախադեպ քանակությամբ՝ մոտ 189 000 ավտոմեքենա: Դա նպաստել է ինչպես հարկային եկամուտների աճին, այնպես էլ տնտեսական աճի արագացմանը (ավտոմեքենաների վերանորոգման, ապահովագրության և այլ հարակից ծառայությունների աճի միջոցով): Այդ պատճառով կառավարությունը ոչ մի քայլ չի ձեռնարկել դրանց ներհոսքը սահմանափակելու համար: Ավտոներկրողների մեծ մասը զգալի ծավալներով վարկեր է վերցրել մեքենաների ներմուծման համար: Եվ այժմ, ԵԱՏՄ երկրներից այլևս հետաքրքրված չեն մեքենաների գնման համար: Հետևաբար, դրանց պահանջարկի կտրուկ նվազումը կհանգեցնի գների անկման: Իրավիճակը մեծ խնդիր է առաջացնելու բնակչության համար՝ վերցրած վարկերը փակելու հետ կապված, ձևավորելով լուրջ սոցիալական դժգոհություններ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: